ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«05» 01 2021 թ. Թիվ 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԹԻՎ 73-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի հունիսի 9-ի թիվ ՀՕ-156-Ն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 21-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2021 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների

կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 73-Լ հրամանով (այսուհետ՝ հրաման) հաստատված Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքում ստեղծել Կոմիտեի կենտրոնական մարմնի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչություն՝ կատարելով համապատասխան փոփոխություններ հաստիքացուցակում:

2. Կոմիտեի կենտրոնական մարմնի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում ստեղծել.

1) առաջին վարչություն,

2) երկրորդ վարչություն,

3) երրորդ վարչություն,

4) չորրորդ վարչություն:

3. Հրամանի N 1 հավելվածի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2-րդ ենթակետով.

«1.2) պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչություն.

ա. առաջին վարչություն,

բ. երկրորդ վարչություն,

գ. երրորդ վարչություն,

դ. չորրորդ վարչություն.»:

2) հրամանի N 2 հավելվածի 1-ին կետի աղյուսակի 2-րդ կետում «164» թիվը փոխարինել «203» թվով, իսկ 6-րդ կետում «975» թիվը՝ «1014» թվով.

4. հրամանի N 2 հավելվածի 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2-րդ ենթակետով.

«1.2) պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչություն.

ա. ղեկավարություն.

N	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԻԱՎՈՐԻ ՔԱՆԱԿԸ
1.	պետ	1
2.	պետի տեղակալ	2
3.	ընդամենը	3

բ. առաջին վարչություն.

N	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԻԱՎՈՐԻ ՔԱՆԱԿԸ
1.	պետ	1
2.	պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ)	1
3.	հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ	3
4.	հատկապես կարևոր գործերով քննիչ	4
5.	ընդամենը	9

գ. երկրորդ վարչություն.

N	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԻԱՎՈՐԻ ՔԱՆԱԿԸ
1.	պետ	1
2.	պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ)	1
3.	հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ	3
4.	հատկապես կարևոր գործերով քննիչ	4
5.	ընդամենը	9

դ. երրորդ վարչություն.

N	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԻԱՎՈՐԻ ՔԱՆԱԿԸ

1.	պետ	1
2.	պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ)	1
3.	հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ	3
4.	հատկապես կարևոր գործերով քննիչ	4
5.	ընդամենը	9

ե. չորրորդ վարչություն.

N	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԻԱՎՈՐԻ ՔԱՆԱԿԸ
1.	պետ	1
2.	պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ)	1
3.	հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ	3
4.	հատկապես կարևոր գործերով քննիչ	4
5.	ընդամենը	9

»:

5. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ